

պաշտօն էր արդարութեան հսկելու: Ուստի դու հիմա սրտիս միմիայն սիրելին, գնա, քաջ եղիր, արդար եղիր, հասիր զրկելոյն, հայր եղիր որբոյն եւ մխիթարիչ այրուոյն. աստուած քեզ վարձատրէ, եւ երբ ես լսեմ քու անուանդ օրհնութիւնը, երբ իմանամ թէ սրտիս Գուրգէնն է, որ հայր եւ պաշտպան եղեր է ժողովրդով, մխիթարութիւն պիտի իմանամ իմ ցաւած եւ վիրաւից սրտիս:

— Օրհնեա՛լ է քու սրտիդ փափագը, իմ հրեշտակս, տարին չի կատարած պիտի լսես իմ անունս, վասնզի աստուած պահէ՝ բայց ես շատ կը վախեմ թէ այս գարունը տոսկալի գարուն մը պիտի լինի, եւ Զայաստան արիւններու աւազան մը:

— Աստուած ինքը հասնի՛ այս թշուառ հայրենեաց:

Եւ Զեդինէ կանոնեցաւ ու պատրաստուեցաւ երթալու:

— Ուրեմն այս մեր առաջին եւ վերջին տեսութիւնն է ուր թերկայն տարիներէ վերջ,— ըսաւ Գուրգէն:

— Այո, աստուած մըր այսպէս ուզեց, նոյն աստուած քեզ օգնական լինի:

— Մնաս բարեաւ, հրեշտակդ իմ, զրուցեց Գուրգէն, եւ իւր թելերուն ու կուրծքին մէջ սեղմելով ծածկեց նրա սիրուն գլուխը համբոյրներով: Իսկ Զեդինէ անշարժ, անսասան իբրեւ արձան

— Աստուած քեզի օգնական, իմ սրտիս միմիայն սերը,— ըսաւ եւ աներեւոյթ եղաւ:

Երկրորդ առաւօտուն, երբ Կ'անգուարի բնակիչքը մեծ եւ փոքր ելան այդ Շաղգումեցի Սուրենը փնտրեցին, տեսան եւ իմացան, որ չի կար, զարմացան թէ այդչափ մեծ ծառայութիւն ընելով եւ փոխարէն մը չընդունած իշխանէն ինչպէ՛ս ելեր հեռացեր էր: